



*Կալիֆորնիայի անկարողություն ունեցող անձանց պահպանության և իրավունքների պաշտպանության համակարգ
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746*

Տարածքային կենտրոնի լսումների նյութերի փաթեթ

Նոյեմբեր 2015թ., Հր. #5484.10

Այս նյութերը Ձեզ կօգնեն պատրաստվել տարածքային կենտրոնում անցկացվող Ձեր լսումներին: Այս ուղեցույցը նախատեսված է տարածքային կենտրոնի 3 տարեկան կամ ավելի փոքր տարիքի շահառուների համար:

"Վաղ սկիզբ" ծրագրի շահառուների համար լսումների գործընթացը տարբեր է (ծնունդից մինչև երեք տարեկան): "Վաղ սկիզբ" ծրագիրը տրամադրում է վաղ միջամտության ծառայություններ և աջակցություն մինչև 3 տարեկան երեխաների համար: Երեխաները համապատասխանում են "Վաղ սկիզբ" ծրագրի համար, եթե ունեն զարգացման խանգարումներ կոգնիտիվ զարգացման, ֆիզիկական աճի, լեզվական հմտությունների և խոսքի զարգացման, սոցիալական կամ զգայական զարգացման կամ ինքնապաշտպանության հմտությունների զարգացման դեպքերում: "Վաղ սկիզբ" ծրագրում լսումների հետ կապված Ձեր իրավունքներին ծանոթանալու համար խնդրում ենք ուսումնասիրել "Վաղ սկիզբ" ծրագրի ծառայությունների տեղեկատու թերթիկը: "Վաղ սկիզբ" ծրագրի և Ձեր իրավունքների մասին մանրամասն տեղեկությունների համար այցելեք.

<http://www.disabilityrightsca.org//pubs/F05701.pdf> և կարդացեք

Կալիֆորնիայի անկարողություն ունեցող անձանց *Իրավունքներ և պատասխանատվություններ* ձեռնարկի գլուխ 12-ը:

Բաժին Առաջին – Տարածքային կենտրոնի որոշման բողոքարկում.
գործնական ձեռնարկ, որը քայլ առ քայլ նկարագրում է տարածքային կենտրոնի ծառայությունների մերժման, դադարեցման կամ կրճատման վերաբերյալ որոշումների բողոքարկման գործընթացը:

Բաժին Երկրորդ – Հավելվածներ. ներառում է աղյուսակներ, նմուշային փաստաթղթեր և լսումների որոշումներ:

Այս ձեռնարկն այն անձի համար է, ում ծառայությունները մերժվել, դադարեցվել կամ կրճատվել են, կամ այն անձը, ով ներկայացնում է նրան որպես "դուր":

Հուսով ենք այս տեղեկատվությունն օգտակար կլինի Ձեզ համար: Եթե ունեք հարցեր, կամ Ձեզ անհրաժեշտ է օգնություն, կապվեք Կալիֆորնիայի անկարողություն ունեցող անձանց իրավունքների կենտրոնի հետ (800) 776-5746 հեռախոսահամարով կամ Շահառուի իրավունքների պաշտպանության Ձեր տարածքային գրասենյակ (800) 390-7032 հեռախոսահամարով:

Բովանդակություն

Գլուխ 1 – Ներածություն	5
Գլուխ 2 – Լսումների գործընթաց	5
Բավարար ծանուցում	5
Լսումների դիմումի ներկայացում	7
Ծառայությունների պահպանում Ձեր բողոքարկման ընթացքում (“Նպաստի վճարման կասեցում”)	7
Ոչ պաշտոնական հանդիպում	7
Միջնորդություն	9
Հայցեր	10
Անկողմնակալ լսումներ	11
Հետաձգում (Տարկետում)	11
Կոնսուլիդացիա	13
Թարգմանիչներ.....	13
Լսումների վայրի մատչելիություն	13
Այլ դատավորի ընտրություն	13
Գլուխ 3 – Նախապատրաստում լսումներին	15
Ձեր իրավական փաստարկի սահմանումը.....	15
Ձեր ապացույցի պատրաստումը.....	15

Էջ 4՝ 54-ից

Գրավոր ապացույցների (փաստաթղթերի) հավաքում.....	15
Վկաների պատրաստում	17
Վկաների ցանկի և իրեղեն ապացույցների փոխանակում	18
Գլուխ 4 – Լսումների ընթացքում և լսումներից հետո	20
Ներածական խոսք	20
Վկաների հարցաքննում	20
Տարածքային կենտրոնի վկաներ	20
Ձեր սեփական վկաները	21
Եզրափակիչ խոսք/Գրավոր եզրափակիչ ամփոփագիր	22
Լսումներից հետո.....	22
ԲԱԺԻՆ 2՝ Հավելվածներ.....	24
Հավելված A՝ Անկողմնակալ լսումների սխեմա.....	25
Հավելված B՝ Դատավորի փոփոխման դիմումի նմուշ.....	29
Հավելված C՝ Հայցվորի վկաների և ապացույցների ցուցակի նմուշ .	32
Հավելված D՝ Հայցվորի եզրափակիչ ամփոփագրի նմուշ	35
Հավելված E՝ Վարչական լսումների որոշում.....	46

Գլուխ 1 – Ներածություն

Դուք իրավունք ունեք բողոքարկելու, եթե.

1. Դուք տարածքային կենտրոնի շահառու եք, ով դիմել է նոր ծառայություն ստանալու համար, իսկ տարածքային կենտրոնն ասել է "ոչ";
2. Տարածքային կենտրոնը ցանկանում է կրճատել կամ հանել որևէ ծառայություն, որը Դուք արդեն ստանում եք, կամ
3. Տարածքային կենտրոնն ասում է, որ Դուք չեք համապատասխանում ծառայությունների համար:

Սույն ձեռնարկը Ձեզ տեղեկացնում է՝ ինչպես բողոքարկել և ինչ ակնկալել բողոքարկման ընթացքում: Եթե Դուք բողոքարկում եք համապատասխանության մերժումը, թիվ 3, խնդրում ենք ուսումնասիրել Տարածքային կենտրոնի համապատասխանության լուսմների փաթեթը՝ <http://www.disabilityrightsca.org/pubs/557301.pdf>

Դուք կարող եք դիմել լուսմների անցկացման համար, եթե համաձայն չեք որևէ ծառայության կրճատման, փոփոխության կամ մերժման հետ, որը Ձեր կարծիքով Ձեզ անհրաժեշտ է ստանալ տարածքային կենտրոնից: Վարչական լուսմը նույնը չէ, ինչ գնալ դատարան, բացի այդ, վախենալու ոչինչ չկա: Վարչական լուսմը երբեմն կոչվում է "անկողմնակալ լուսմ": Այս լուսմները սովորաբար անցկացվում են տարածքային կենտրոնում կամ հարակից որևէ սենյակի ներսում: Լուսմների դատավորը կոչվում է "վարչական գործերով դատավոր":

Լուսմների մասին ստորև ներկայացված բաժինը մեկնաբանում է լուսմների գործընթացը և ինչպես կարելի է դիմել լուսմների անցկացման համար:

Գլուխ 2 – Լուսմների գործընթաց

Բավարար ծանուցում

Եթե տարածքային կենտրոնը ցանկանում է մերժել, կրճատել կամ ավարտել որևէ ծառայության տրամադրումը, ապա տարածքային կենտրոնը պետք է նշանակի Անհատական ծրագրային պլանի (Individual Program Plan - IPP) կազմման հանդիպում: Դուք իրավունք ունեք ստանալու գործողությունների ձեռնարկման գրավոր ծանուցում (NOA), եթե տարածքային կենտրոնն ասել է "ոչ" Ձեր ցանկացածին: Տարածքային կենտրոնի ծանուցումը պետք է տեղեկացնի Ձեզ, ինչ է նախատեսում անել կենտրոնը և որ օրենքներն են թույլ տալիս կայացնել իր որոշումը: Այս տեղեկատվությունը կօգնի Ձեզ որոշել, արդյոք Դուք պետք է բողոքարկեք, և այն կօգնի Ձեզ պատրաստվել Ձեր լուծմաներին: Ծանուցումը պետք է տեղեկացնի հետևյալը.

- Ինչ է անելու տարածքային կենտրոնը,
- Ինչու է տարածքային կենտրոնն անում դա,
- Երբ է տարածքային կենտրոնն անում դա,
- Այն օրենքը, կարգը կամ քաղաքականությունը, որը թույլ է տալիս նրանց անել դա,
- Ինչպես և որտեղ ներկայացնել բողոքարկման դիմում,
- Բողոքարկման դիմումի ներկայացման ժամկետները,
- Տեղեկատվություն բողոքարկման գործընթացի մասին,
- Ինչպես տեսնել Ձեր տարածքային կենտրոնի գրանցած տվյալները և
- Որտեղ դիմել պաշտպանության աջակցություն ստանալու համար:

Գործողությունների ձեռնարկման ծանուցումն ստանալուց հետո կարող եք ներկայացնել լուծման անցկացման դիմում, եթե համաձայն չեք: Եթե տարածքային կենտրոնը մերժում, կրճատում կամ դադարեցնում է որևէ ծառայություն առանց նախապես ծանուցելու, Դուք կարող եք

այնուամենայնիվ բողոքարկել - բողոքարկման համար Ձեզ անհրաժեշտ չէ ունենալ գործողությունների ձեռնարկման գրավոր ծանուցումը: Դուք պետք է ընդամենը լրացնեք Անկողմնակալ լսումների անցկացման ձևաթուղթը, որը կարող եք գտնել այստեղ.

<http://www.dds.ca.gov/Forms/FairHearing/DS1805.pdf>.

Լսումների դիմումի ներկայացում

Լսումների անցկացման դիմում ներկայացնելու համար լրացրեք և ուղարկեք Անկողմնակալ լսումների անցկացման ձևաթուղթը, որը տարածքային կենտրոնն ուղարկել էր Ձեզ գործողությունների ձեռնարկման գրավոր ծանուցման հետ միասին: Լսումների անցկացման Ձեր դիմումն ուղարկեք Ձեր տարածքային կենտրոնին: Եթե չգիտեք ում ուղարկել այն, ուղարկեք և՛ Ձեր տարածքային կենտրոնին, և՛ Վարչական լսումների վարչությանը 2349 Gateway Oaks Drive, Suite 200, Sacramento, CA 95833 հասցեով կամ ֆաքսով (916) 376-6318 համարին:

Ծառայությունների պահպանում Ձեր բողոքարկման ընթացքում ("Նպաստի վճարման կասեցում")

Եթե տարածքային կենտրոնը փորձում է փոխել ծառայությունները, որոնք Դուք արդեն ստանում եք, բողոքարկման ընթացքում Դուք իրավունք ունեք պահպանել նույն ծառայությունները: Ձեր ծառայությունների փոփոխումը կանխելու համար Դուք պետք է բողոքարկեք գործողությունների ձեռնարկման գրավոր ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Դա կոչվում է "նպաստի վճարման ժամանակավոր կասեցում": Եթե դիմում եք նոր ծառայություն ստանալու համար, և տարածքային կենտրոնն ասում է "ոչ", Դուք չունեք նպաստի վճարման ժամանակավոր կասեցման իրավունք:

Ոչ պաշտոնական հանդիպում

Անկողմնակալ Լսումների անկացման ձևաթուղթը ներկայացնելուց հետո լսումներից առաջ կարող եք դիմել ոչ պաշտոնական հանդիպման և/կամ միջնորդության համար: Ոչ պաշտոնական հանդիպումը լսումների գործընթացի առաջին քայլն է: Դա հանդիպում է Ձեր (և Ձեր ներկայացուցչի, եթե ունեք) և տարածքային կենտրոնի ներկայացուցչի միջև: Նպատակն է լուծել խնդիրը կամ առնվազն նվազեցնել խնդրի էությունը լսումների համար: Սա Ձեր հնարավորությունն է տարածքային կենտրոնի պատասխանատուին հանդիպելու և նրան Ձեզ անհրաժեշտ ծառայությունը տալու մեջ համոզելու համար: Դուք պարտավոր չեք ունենալ ոչ պաշտոնական հանդիպում: Եթե դիմում եք հանդիպման համար, տարածքային կենտրոնը պարտավոր է կազմակերպել այն: Անկողմնակալ լսումների ժամանակացույցը ներառված է հավելված A-ում:

Ոչ պաշտոնական հանդիպումից հետո 5 օրվա ընթացքում տարածքային կենտրոնը պետք է ուղարկի Ձեզ գրավոր որոշում: Գրավոր որոշման մեջ պետք է թվարկված լինեն հանդիպման ընթացքում քննարկված խնդիրները: Որոշման մեջ պետք է նշված լինեն տարածքային կենտրոնի որոշումները յուրաքանչյուր խնդրի շուրջ, յուրաքանչյուր որոշմանը աջակցող փաստերը և բոլոր այն օրենքները, կանոնակարգերն ու քաղաքականությունները, որոնք տարածքային կենտրոնն օգտագործել է իր որոշումը կայացնելու համար: Այն պետք է հայտնի Ձեզ նաև, թե ինչպես կարող եք բողոքարկել որոշումը:

Եթե համաձայն եք ոչ պաշտոնական հանդիպումից հետո տարածքային կենտրոնի կայացրած որոշման հետ, կարող եք լսումների համար ներկայացրած Ձեր դիմումը հետ վերցնել: Դա կարող եք անել՝ լրացնելով "Տեղեկացում վճռի մասին" ձևաթուղթը, որը տրամադրում է տարածքային կենտրոնը: Որոշումն ուժի մեջ է մտնում 10 օրից, երբ տարածքային կենտրոնն ստանում է "Տեղեկացում վճռի մասին" ձևաթուղթը:

Եթե համաձայն չեք Ձեր ոչ պաշտոնական հանդիպումից հետո տարածքային կենտրոնի կայացրած որոշման հետ, կարող եք շարունակել լսումներ կամ միջնորդություն նշանակելու գործընթացը: Դուք պարտավոր չեք ընդունել տարածքային կենտրոնի որոշումը:

Միջնորդություն

Եթե համաձայն չեք ոչ պաշտոնական որոշման հետ, հաջորդ քայլը միջնորդությունն է: Ինչպես Դուք, այնպես էլ տարածքային կենտրոնը կարող եք որոշել չմասնակցել միջնորդությանը: Շատ տարածքային կենտրոններ չեն մասնակցում: Եթե դիմեք միջնորդության համար, իսկ տարածքային կենտրոնն ասի "ոչ", ապա հաջորդ քայլը անկողմնակալ լսումներն են:

Միջնորդությունը հանդիպում է, որի ընթացքում անկախ, վերապատրաստված միջնորդը հանդիպում է Ձեր և տարածքային կենտրոնի ներկայացուցչի հետ: Այն կայանում է լսումների անցկացման համար Ձեր դիմումի ներկայացումից հետո 30 օրվա ընթացքում: Միջնորդը կփորձի գտնել ընդհանուր հիմնավորում և նոր լուծումներ: Միջնորդը լիազորություն չունի համաձայնության բերելու: Համաձայնության գալու դեպքում Դուք ստորագրում եք փաստաթուղթ համաձայնության վերաբերյալ, և բողոքարկման գործընթացը դադարում է: Եթե համաձայնության չեք գալիս, անցնում եք անկողմնակալ լսումների:

Յուրաքանչյուրը պետք է դիտարկի միջնորդության հնարավորությունը: Միջնորդությունը հաճախ լավ գաղափար է, քանի որ այն Ձեզ և տարածքային կենտրոնին տալիս է համաձայնության գալու մեկ այլ հնարավորություն: Սակայն այն որոշ ժամանակ է պահանջում: Միջնորդն անկախ է և օգնում է Ձեզ համաձայնության գալու: Եթե անգամ միջնորդությունը Ձեզ օգուտ չի տալիս, Դուք ավելի շատ տեղեկատվություն եք ստանում տարածքային կենտրոնի գործի մասին: Այդ տեղեկատվությունը կարող է օգնել Ձեզ Ձեր անկողմնակալ լսումների

ժամանակ: Եթե կարծում եք, որ համաձայնության գալու հույս չկա, կարող եք որոշել ՉԴԻՄԵԼ միջնորդությանը: Սա կոչվում է "հրաժարում միջնորդությունից": Սակայն շատ մարդիկ, ովքեր կարծում են, որ համաձայնության գալու հույս չկա, գալիս են համաձայնության միջնորդության ընթացքում: Եթե Դուք կամ տարածքային կենտրոնը հրաժարվում եք միջնորդությունից, համոզվեք, որ Դուք պատրաստ եք Ձեր լուումներին: Ձեր լուումները կարող են նշանակվել ավելի շուտ, քանի եթե գնայիք միջնորդության:

Հայցեր

Հայցը դիմում է վարչական գործերով դատավորին՝ որևէ բան նախքան լուումները որոշելու համար: Հայցի օրինակներ են վաղեմության ժամկետի մասին գործող օրենքի հիման վրա գործի դադարեցման կամ դատական ծանուցագրերը չեղարկելու հայցադիմումները: Դուք կարող եք ներկայացնել հայցեր: Տարածքային կենտրոնը նույնպես կարող է ներկայացնել հայցեր:

Վարչական վարույթի մասին օրենքը (Administrative Procedure Act - “APA”) չի գործում տարածքային կենտրոնի լուումների վրա, սակայն այն կարող է լինել օգտակար ուղեցույց հայցերին պատասխանելու համար: APA-ն կարելի է գտնել այստեղ.

<http://www.dgs.ca.gov/oah/GeneralJurisdiction/APAHearings.aspx>:

Որոշ տարածքային կենտրոններ ներկայացրել են հայցեր՝ գործը կարճելու համար: Կարճելու պահանջով հայցը խնդրում է դատավորին թույլ չտալ լուումների անցկացումը, քանի որ Դուք լուումների իրավունք չունեք: Այս տեսակի հայցերը հազվադեպ են լինում: Այն նաև հակասում է այն օրենքին, որը երաշխավորում է լուումների Ձեր իրավունքը: Բացառություն է համարվում միմիայն այն դեպքը, երբ որևէ փաստացի հիմք ընդհանրապես գոյություն չունի, օրինակ եթե օրենքն ասում է, որ ոչ մեկն այլևս չի համապատասխանում որոշակի ծառայության համար՝ անկախ կարիքներից:

Անկողմնակալ լսումներ

Բողոքարկման գործընթացի վերջին քայլը անկողմնակալ լսումներն են: Այն կայանում է Ձեր դիմումի ներկայացումից հետո 50 օրվա ընթացքում, քանի դեռ որևէ մեկը չի դիմում այն հարգելի պատճառով հետաձգելու համար: Դուք և տարածքային կենտրոնը անկողմնակալ լսումների անցկացումից 5 օրացուցային օր առաջ պետք է միմյանց ուղարկեք Ձեր իրեղեն ապացույցները (փաստերը) և վկաների ցանկը: Լսումներն անցկացվում են Վարչական լսումների վարչության (Office of Administrative Hearings - OAH) վարչական գործերով դատավորի (Administrative Law Judge - ALJ) առջև: Լսումների ժամանակ տարածքային կենտրոնը պետք է առաջինը ներկայացնի իր գործը: Վարչական գործերով դատավորը լսումներից մոտ 10 օր հետո հրապարակում է գրավոր որոշում:

Հետաձգում (Տարկետում)

Ինչպես Դուք, այնպես էլ տարածքային կենտրոնը կարող եք դիմել լսումների կամ միջնորդության ամսաթիվը փոխելու համար: Լսումների ամսաթիվը հետաձգելու համար Դուք ներկայացնում եք "Լսումների հետաձգման և ժամկետից հրաժարման հայց": Հայցադիմումի ձևաթուղթը տե՛ս հետևյալ հղումով.

<http://www.documents.dgs.ca.gov/oah/forms/DDS RFC Form.pdf>

Ձևաթղթում կա հատված, որտեղ Դուք պետք է մեկնաբանեք, թե ինչու է Ձեզ անհրաժեշտ հետաձգել լսումները: Վարչական լսումների վարչությունը թույլ կտա հետաձգում, եթե "հարգելի պատճառը" ներկայացված լինի: Դուք կարող եք կցել նաև ցանկացած փաստաթուղթ, որը կհիմնավորի հետաձգման համար անհրաժեշտությունը:

Ձևաթղթում Ձեզ հորդորվում է զանգահարել տարածքային կենտրոնի ներկայացուցչին և հարցնել, արդյոք նա համաձայն է հետաձգել լսումները: Հատկացված հատվածում Դուք պետք է գրեք տարածքային

կենտրոնի այն անձի անունն ու հեռախոսահամարը, ում հետ խոսել էք: Այնուհետև ընտրեք՝ արդյոք տվյալ անձը համաձայնել է հետաձգմանը, թե առարկել է: Դուք պետք է հարցնեք տարածքային կենտրոնի անձի ֆաքսի համարը կամ էլ.փոստի հասցեն՝, որպեսզի լրացված ձևաթուղթը ուղարկեք նրան ստորագրելու համար:

Դուք կամ Ձեր ներկայացուցիչը պետք է ստորագրեք "Անկողմնակալ լսումների և որոշման մասին Լանթերմանի օրենքով սահմանված հրաժարում ժամկետից" վերնագրով հատվածը: Հետաձգում ստանալու համար Դուք պետք է համաձայնեք "հրաժարվել" լսումների ժամկետներից: Դա նշանակում է, որ Դուք համաձայնում եք, որպեսզի լսումները կայանան անկողմնակալ լսումների Ձեր դիմումը ներկայացնելուց հետո 50 օրից ավելի ուշ:

Հիշեք, որ ձևաթուղթը ֆաքսով կամ էլ.փոստով պետք է ուղարկել տարածքային կենտրոնի ներկայացուցչին ստորագրելու համար: Ստորագրելուց հետո այն պետք է ֆաքսով ուղարկեք Վարչական լսումների վարչությանը: Օգտագործեք այն վայրի ֆաքսի համարը, որտեղ պետք է կայանան լսումները.

OAH Սակրամենտո՝ (916) -376-6318

OAH Լոս Անջելես՝ (916) -376-6395

OAH Սան Դիեգո՝ (916) -376-6325

OAH Օկլենդ՝ (916) -376-6323

Եթե Դուք չունեք բավարար ժամանակ գրավոր հայց ուղարկելու համար, կարող եք փորձել զանգահարել Վարչական լսումների վարչություն և խնդրել հետաձգում հեռախոսով: Լսումների հետաձգման հայցը ներկայացնելուց հետո կարող եք ստուգել Վարչական լսումների վարչության կայքէջը՝ հետաձգման տրամադրումն ստուգելու համար.

<http://www.dgs.ca.gov/oah/GeneralJurisdiction/Continuances.aspx>

Ձեզ անհրաժեշտ կլինի մուտքագրել Վարչական լսումների վարչության տրամադրած գործի համարը՝ որոնում կատարելու համար:

Կոնսուլիդացիա

Կոնսուլիդացիայի դեպքում ընդհանուր խնդիրներ կամ փաստեր ունեցող երկու կամ ավելի գործեր լսվում են միևնույն ժամանակ նույն դատավորի կողմից: Դուք կարող եք դիմել կոնսուլիդացիայի համար: Վարչական լսումների վարչությունը նույնպես կարող է դիմել երկու կամ ավելի գործեր կոնսուլիդացնելու համար: Եթե հարմար չէք գտնում կոնսուլիդացմանը համաձայնելու համար, կարող եք ասել "ոչ": Դատավորը կորոշի՝ արդյոք կոնսուլիդացնել գործերը Լանթերմանի օրենքի հիման վրա և գործերի հանգամանքները:

Թարգմանիչներ

Եթե Ձեզ կամ վկային անհրաժեշտ է թարգմանիչ, անմիջապես դիմե՛ք Վարչական լսումների վարչություն: Վարչական լսումների վարչությունը կտրամադրի անվճար հավաստագրված թարգմանիչ:

Լսումների վայրի մատչելիություն

Լսումների վայրերը պետք է մատչելի լինեն անկարողություն ունեցող անձանց համար: Դուք պետք է Վարչական լսումների վարչության հետ նախապես ճշտեք, համոզվելու համար, որ վայրը մատչելի է: Եթե անկարողություն ունեցող անձին անհրաժեշտ է ողջամիտ կացարան լսումներին այցելելու համար, հնարավորինս շուտ կապվեք Վարչական լսումների վարչության հետ, որպեսզի Վարչական լսումների վարչությունը կարողանա կազմակերպել:

Այլ դատավորի ընտրություն

Ոչ բոլոր դատավորներն են նույնը: Դուք պետք է դատավորի մասին տեղեկանաք նախքան լսումները: Դուք կարող եք ունենալ այլ դատավոր, եթե Ձեզ հասկացված դատավորն ունենա կողմնակալություն կատարելու կամ շահագրգռվածություն ունենալու պատմություն: Դա կարող եք անել՝ ներկայացնելով դատավորի բացարկման հայց: Դատավոր փոփոխման դիմումի նմուշը գետեղված է հավելված B-ում:

Ձեր գործին կցված դատավորի մասին մանրամասն տեղեկությունների համար մուտք գործեք Վարչական լսումների վարչության կայքէջ <http://www.dgs.ca.gov/oah/GeneralJurisdiction/Calendar.aspx> հասցեով (ընդհանուր իրավասության օրացույց) և մուտքագրեք Ձեր գործի համարը: Դատավորը կկցվի լսումների ամսաթվին մոտ ժամկետում: Այնուհետև անցեք <http://www.dgs.ca.gov/oah/DDSHearings/DDSDecisions.aspx> հղումով և մուտքագրեք դատավորի անունը: Դուք կտեսնեք այն գործերի ցանկը, որոնց վերաբերյալ տվյալ դատավորը որոշում է կայացրել: Կարդացեք գործերից մի քանիսի մասին՝ տեսնելու արդյոք նա հենց այն դատավորն է, ով կցանկանայիք որ որոշեր Ձեր գործը: Եթե ոչ, ապա ներկայացրեք դատավորի բացարկման հայց: Պարզապես բացարկման հայցը փոստով կամ ֆաքսով ուղարկեք Վարչական լսումների վարչություն: Տրամադրեք Ձեր կոնտակտային տվյալները: Եթե Վարչական լսումների վարչությունից պատասխան չստանաք, մինչև լսումները զանգահարեք Վարչական լսումների վարչություն՝ պարզելու, արդյոք Ձեր դիմումը բավարարվել է: Սովորաբար դիմումը բավարարվում է:

Գլուխ 3 – Նախապատրաստում լսումներին

Ձեր իրավական փաստարկի սահմանումը

Ձեր իրավական փաստարկն այն օրենքն է, որի վրա հիմնվում եք՝ ցույց տալու, որ Դուք համապատասխանում եք ծառայության համար, և որ տարածքային կենտրոնը համաձայն չէ դրա հետ, ինչպես նաև այն փաստերը, որոնք հիմնավորում են Ձեր բողոքը: Ձեր իրավական փաստարկը պատրաստելու համար.

- ուսումնասիրեք այն օրենքը, որը պաշտպանում է Ձեր դիրքորոշումը,
- Որոնք և կարդացեք նախորդ Անկողմնակալ լսումների վերաբերյալ որոշումները հետևյալ հղումով.

<http://www.dgs.ca.gov/oah/DDSHearings/DDSDecisions.aspx>:

Ձեր ապացույցի պատրաստումը

Ապացույց են հանդիսանում այն փաստերը, որոնք հիմնավորում են Ձեր բողոքը: Ապացույցն իր մեջ ներառում է փաստաթղթեր և վկաների վկայությունները: Դուք պետք է օգտագործեք միայն առնչություն ունեցող ապացույցներ: Ապացույցն առնչվում է, եթե այն օգնում է ապացուցել, որ Դուք համապատասխանում եք այն ծառայությանը, որը տարածքային կենտրոնը մերժել է, փորձել է կրճատել կամ փորձել է հանել:

Գրավոր ապացույցների (փաստաթղթերի) հավաքում

Դուք պետք է հավաքեք բոլոր այն գրավոր ապացույցները, որոնք հիմնավորում են Ձեր իրավական փաստարկը: Ապացույցների որոշ օրինակներ են.

- ծառայության նկարագրությունը,
- Ձեր Անհատական ծրագրային պլանը, որը նկարագրում է ծառայության նպատակները,

- այն հոգեբանական նյութերն ու վերլուծությունները, որոնք ցույց են տալիս, որ Ձեզ անհրաժեշտ է ծառայությունը,
- մասնագիտացված վերապատրաստում անցած անձնակազմի անդամների ինքնակենսագրականները,
- ծառայություն մատուցողի ընթացիկ հաշվետվությունները, և
- ծառայության մասին անձնակազմի անդամների կամ այլ անձանց հայտարարագրերը:

Դուք կարող եք վերցնել փաստաթղթեր դպրոցներից, բժշկական հիմնարկներից և պետական գործակալություններից, եթե դրանք կարող են պարունակել օգտակար տեղեկատվություն: Մի՛ սպասեք փաստաթղթերը վերցնելու համար: Փաստաթղթերի հավաքագրումը հաճախ ավելի երկար է տևում, քան կարծում եք:

Արդեն առկա փաստաթղթերից բացի Ձեզ կարող է անհրաժեշտ լինել հավաքել Ձեր գործին օգնող լրացուցիչ փաստաթղթային ապացույցներ, ինչպիսին է փորձագետի վերլուծական հաշվետվությունը: Ձեզ ճանաչող մարդկանց կարող եք խնդրել գրել նամակներ կամ հայտարարագրեր: Դատավորը կարող է առավել ծանրակշիռ համարել լսումներից նրպես վկա ներկա անձի տեղեկությունները, քան նամակ կամ հայտարարագիր գրող անձի տեղեկությունները:

Դուք իրավունք ունեք տեսնելու Ձեր տարածքային կենտրոնի թղթապանակի նյութերը՝ ներառյալ այն նյութերը, որոնք տարածքային կենտրոնն ստացել է արտաքին գործակալություններից կամ անհատներից: Տարածքային կենտրոնը պետք է Ձեր նյութերից օգտվելու հնարավորություն տրամադրի դրանք տեսնելու համար Ձեր դիմելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ցանկանաք, տարածքային կենտրոնը պետք է օգնի Ձեզ նաև հասկանալ այս նյութերը: Եթե տարածքային կենտրոնի թղթապանակում ընդգրկված են փաստաթղթեր, որոնք օգնում են ապացուցել Ձեր գործը, Դուք պետք է դրանք ներառեք Ձեր ապացույցներում: Մի՛ ենթադրեք, որ վարչական

գործերով դատավորը կունենա դրանք, քանի որ դրանք ունի տարածքային կենտրոնը: Վարչական գործերով դատավորը տեսնում է միայն այն ապացույցները, որոնք Դուք և տարածքային կենտրոնն ընտրում եք տրամադրելու համար:

Դուք պետք է ուսումնասիրեք տարածքային կենտրոնի Ծառայությունների գնման պայմանները, քաղաքականությունները կամ ուղեցույցները: Դրանցից շատերը հրապարակված են Ձեր տարածքային կենտրոնի կայքէջում: Եթե չեք կարողանում գտնել Ծառայությունների գնման պայմաններն ու քաղաքականություններն առցանց, զանգահարեք տարածքային կենտրոն և խնդրեք դրանց օրինակը: Եթե ծառայությունների սահմանումներն օգտակար են Ձեր գործի համար, դրանք ներառեք Ձեր ապացույցներում:

Դուք կարող եք որևէ գործակալությանը կանչել դատարան՝ Ձեզ համար նյութեր պատրաստելու համար: Փաստաթղթերով դատարան ներկայանալու ծանուցումը գործակալությանը պարտավորեցնում է բերել իրենց ունեցած նյութերը և դատարանին հավաստիացնել, որ փաստաթղթերը կամ նյութերը փոփոխված չեն: Դուք կարող եք խնդրել գործակալությանն անել դա հայտարարագրով կամ ուղղակի վկայությամբ: Տարածքային կենտրոնի անկողմնակալ լսումների դատարանի ծանուցման ձևը կարող եք գտնել հետևյալ հասցեում.

[http://www.documents.dgs.ca.gov/oah/forms/oah1-subpoena.pdf#search=subpoena%20Form&view=FitH&pagemode=none:](http://www.documents.dgs.ca.gov/oah/forms/oah1-subpoena.pdf#search=subpoena%20Form&view=FitH&pagemode=none)

Վկաների պատրաստում

Վկայի վկայությունը նույնպես ապացույցի մի տեսակ է: Երբեմն վկաներին անհրաժեշտ է կանչել դատարան: Դատարան կանչելու ծանուցումը իրավական կարգ է, որը նրանց պարտադրում է այցելել լսումներին վկայություն տալու համար: Դուք պետք է վկաներին կանչեք

դատարան և խնդրեք նրանց վկայություն տալ լսումների ամսաթիվն իմանալուն պես, որպեսզի մարդիկ գալուն պատրաստ լինեն:
Դատարան կանչելու ծանուցման ձևը կարող եք գտնել հետևյալ հասցեում՝ <http://www.documents.dgs.ca.gov/oah/forms/oah1-subpoena.pdf#search=Subpoena%20Form&view=FitH&pagemode=none>:

Դուք պետք է նախապես գրեք Ձեր վկաների հարցերը: Այդ հարցերն ուսումնասիրեք վկաների հետ՝ համոզվելու համար, որ վկաները հասկանում են Ձեր հարցերը և որ պատասխանը կօգնի Ձեր գործին: Եթե վկայի պատասխանը չի օգնում Ձեր գործին, ապա այդ հարցը լսումների ժամանակ մի տվեք: Հարցի ձևակերպման փոփոխումը կարող է օգնել:

Դուք նույնպես պետք է պատրաստվեք վկայություն տալու համար, քանի որ Դուք լավագույն վկան եք Ձեր կամ Ձեր երեխայի համար: Պատրաստ եղեք խոսելու այն մասին, թե ինչու է Ձեզ անհրաժեշտ ծառայությունը: Դուք կարող եք ցանկանաք ասել, թե ինչու են այլ ծառայությունները անհաջող եղել: Սրանք կարող են օգտակար օրինակներ լինել, թե ինչու է Ձեզ անհրաժեշտ այն ծառայությունը, որի համար դիմել եք:

Վկաների ցանկի և իրեղեն ապացույցների փոխանակում

Լսումներից առնվազն 5 օրացուցային օր առաջ Դուք և տարածքային կենտրոնը պետք է փոխանակեք հավանական վկաների ցուցակները և այն փաստաթղթերի կրկնօրինակները, որոնք Դուք հնարավոր է օգտագործեք լսումների ժամանակ որպես ապացույց: Դա նշանակում է՝ Դուք և տարածքային կենտրոնը պետք է ստանաք փաստաթղթերը և ցուցակը լսումներից առնվազն 5 օր առաջ: Վկաների ցանկը պետք է ներառի համառոտ տեղեկություն այն մասին, թե վկաներից յուրաքանչյուրը ինչի մասին է վկայություն տալու: Վկաների ու ապացույցների ցուցակի նմուշը ներառված է հավելված C-ում: Վարչական գործերով դատավորը կարող է թույլ չտալ Ձեզ կամ տարածքային կենտրոնին ներկայացնել այն փաստաթղթերը կամ

Էջ 19՝ 54-ից

վկաներին, որոնք չեն հանձնվել միմյանց լսումներից առնվազն 5 օրացուցային օր առաջ:

Գլուխ 4 – Լսումների ընթացքում և լսումներից հետո

Լսումներին եկեք բավական մեծ պահեստային ժամանակով: Լսումները կարող են երկար լինել, այնպես որ Ձեզ հետ ջուր և թեթև ուտելիք բերեք: Ձեզ հետ բերեք թուղթ ու գրիչ՝ լսումների ժամանակ գրառումներ անելու համար:

Ներածական խոսք

Դուք պետք է ներածական խոսք ասեք: Ներածական խոսքը պարտադիր չէ, սակայն այն օգնում է բացատրել վարչական գործերով դատավորին, թե ինչի մասին է լսումը: Ձեր ներածական խոսքը պետք է նկարագրի այն ծառայությունը, որի համար դիմել եք և ինչու եք դիմել: Այն պետք է ներկայացնի այն օրենքը, որը պաշտպանում է Ձեր պահանջը: Ձեզ կամ Ձեր երեխային նկարագրեք այնպես, որ վարչական գործերով դատավորը հասկանա, թե ինչ է անհրաժեշտ Ձեզ կամ Ձեր երեխային: Ձեր ներածական խոսքը պետք է լինի Ձեր գործի համառոտ նկարագրությունը: Առաջինն իր ներածական խոսքն է ասում տարածքային կենտրոնը: Այնուհետև Դուք կասեք Ձերը:

Վկաների հարցաքննում

Տարածքային կենտրոնի վկաներ

Առաջինն իր վկաներին է ներկայացնում տարածքային կենտրոնը: Դուք կարող եք տալ Ձեր հարցերը տարածքային կենտրոնի վկային, երբ տարածքային կենտրոնն ավարտի իր հարցերը: Սա կոչվում է "խաչաձև հարցաքննում": Ձեր հարցերը պետք է օգնեն ցույց տալու, որ վկան որևէ բան չի հասկանում կամ չի հիշում փաստերը: Դուք կարող եք տալ նաև այնպիսի հարցեր, որ վկան անցնի Ձեր կողմը, փոխի իր նախկին ասածը կամ հնարավոր է չասի ճշմարտությունը:

Ուշադիր եղեք տարածքային կենտրոնի վկայի վկայությունների ժամանակ: Դուք կարող եք թույլ կողմ նկատել, որը հետագայում կներկայացնեք Ձեր խաչաձև հարցաքննման ժամանակ: Այլապես պետք է հետևեք լսումներից առաջ Ձեր գրած խաչաձև հարցաքննման հարցերը տալուն: Լավ գաղափար չէ տալ այնպիսի հարց, որի պատասխանը Դուք արդեն չգիտեք, քանի որ հակառակ դեպքում Դուք կարծում եք, որ հավանական պատասխանը մեծապես կօգնի Ձեր փաստարկին:

Ձեր սեփական վկաները

Հաջորդիվ Դուք հարցեր եք տալիս Ձեր սեփական վկաներին: Սա կոչվում է "ուղղակի հարցաքննում": Վկաները պետք է խոսեն միայն այնպիսի հարցերի շուրջ, որոնք իրենք են արել կամ տեսել կամ լսել: Դուք պետք է տաք կարճ, պարզ, հստակ հարցեր:

Ձեր հիմնական փաստարկը ներկայացնելուց բացի Դուք կարող եք Ձեր վկաներին հարցեր տալ՝ տարածքային կենտրոնի վկաների ասածները հերքելու համար: Այլապես պետք է հետևեք լսումներից առաջ Ձեր պատրաստած հարցերը տալուն: Դուք կարող եք տալ հետևողական հարցեր, եթե Ձեր վկայի պատասխանը հստակ չէ:

Տարածքային կենտրոնը կունենա Ձեր վկային խաչաձև հարցաքննելու հնարավորություն: Վարչական գործերով դատավորը նույնպես կարող է վկաներին հարցեր տալ: Երբ տարածքային կենտրոնը վերջացնի Ձեր վկայի խաչաձև հարցաքննումը, Դուք հնարավորություն կունենաք Ձեր վկային ավելի շատ հարցեր տալու: Սա կոչվում է հարցաքննում խաչաձև հարցաքննումից հետո: Այս պահին Դուք կարող եք Ձեր վկային օգնել պարզաբանել կամ վերաձևակերպել բոլոր բացասական արտահայտությունները, որոնք հնարավոր է ասվեն խաչաձև հարցաքննման ժամանակ:

Եզրափակիչ խոսք/Գրավոր եզրափակիչ ամփոփագիր

Լսումներին մասնակցելիս պետք է հասկանաք, որ դատավորը չի տիրապետում ողջ տեղեկատվությանը՝ կշռադատված որոշում կայացնելու համար: Եթե այդպես է, կարող եք դատավորին խնդրել "բաց պահել նյութերը": Դատավորը կարող է պատասխանել "այո" կամ "ոչ": Եթե դատավորը համաձայնում է նյութերը բաց պահել, դա երկու կողմին թույլ կտա լսումներից հետո դատավորին ավելի շատ փաստաթղթեր ու տեղեկատվություն տրամադրել:

Վարչական գործերով դատավորը լսումների վերջում սովորաբար դիմում է եզրափակիչ խոսքով հանդես գալու համար՝ ապացույցներն ամփոփելու նպատակով: Սա լավ հնարավորություն է կրկին հակիրճ ներկայացնել այն, ինչ ներկայացրել եք լսումների ժամանակ և կրկնել Ձեր դիրքորոշումը այն մասին, որ Դուք իրավունք ունեք ստանալու ծառայությունը: Երբեմն երկու կողմերը համաձայնում են բանավոր եզրափակիչ խոսքի փոխարեն կազմել գրավոր եզրափակիչ ամփոփագիր: Այս տարբերակը թույլ է տալիս մտածել բոլոր վկայությունների մասին նախքան Ձեր փաստարկն ամփոփելը: Գրավոր եզրափակիչ ամփոփագիրը պետք է տրամադրի Ձեր ներկայացրած տեղեկատվությունն ու փաստերը և նշի այն օրենքը, որը հիմնավորում է Ձեր գործը: Եթե վարչական գործերով դատավորը լսումներից հետո նյութերը պահել է բաց և թույլ է տվել ավելի շատ ապացույցներ ներկայացնել, Դուք կարող եք ներառել դրանք Ձեր եզրափակիչ ամփոփագրում: Եզրափակիչ ամփոփագրի նմուշը ներառված է հավելված D-ում:

Լսումներից հետո

Լսումներից հետո վարչական գործերով դատավորն ունի 10 օր որոշումը գրելու համար: Որոշումը պետք է կայացվի ոչ ուշ, քան Ձեր բողոքարկումը ներկայացնելուց 80 օր հետո: Լսումների որոշման նմուշը

ներառված է հավելված E-ում: Վարչական գործերով դատավորի որոշումը պետք է.

- գրված լինի պարզ, առօրյա լեզվով,
- ներառի փաստերի ամփոփումը,
- ներառի այն ապացույցների մասին տեղեկատվություն, որոնք վարչական գործերով դատավորն օգտագործել է որոշումը կայացնելու համար,
- ներառի որոշում յուրաքանչյուր խնդրի կամ հարցի վերաբերյալ, որոնք ընդգրկված են եղել լսումների դիմումում և ներկայացվել են լսումների ժամանակ, և
- նշի այն օրենքները, կանոնակարգերը և քաղաքականությունները, որոնք հիմնավորում են վարչական գործերով դատավորի որոշումը:

Եթե Դուք համաձայն չեք լսումների որոշման հետ, Դուք իրավունք ունեք բողոքարկել Վերին աստիճանի դատարանում: Դուք պետք է բողոքարկեք լսումների որոշումն ստանալուց հետո 90 օրվա ընթացքում: Այս գործընթացի մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Լանթերմանի օրենքով սահմանվող իրավունքները փաստաթղթի գլուխ 12-ը. <http://www.disabilityrightsca.org/pubs/506301Ch12.pdf>

Էջ 24՝ 54-ից

ԲԱԺԻՆ 2՝ Հավելվածներ

Հավելված A՝ Անկողմնակալ լսումների սխեմա

Պահանջեք Անկողմնակալ լսում, եթե. (1) տարածքային կենտրոնը որոշում է առանց Ձեր համաձայնության կտրել, կրճատել կամ փոփոխել Ձեր IPP-ի որևէ ծառայություն կամ օգնություն, (2) Դուք դիմել եք որևէ ծառայության կամ օգնության համար, իսկ տարածքային կենտրոնը մերժել է Ձեր դիմումը, (3) Ձեզ տեղեկացրել են, որ Դուք չեք համապատասխանում կամ այլևս համապատասխան չեք տարածքային կենտրոնի ծառայությունների համար:

Հարց 1. Դուք ներկայումս ստանու՞մ եք որևէ ծառայություն կամ օգնություն, որը տարածքային կենտրոնը ցանկանում է կտրել, կրճատել կամ փոփոխել:

ԱՅՈ > Լսումների համար Ձեր դիմումը ներկայացրեք ծանուցումն ստանալու ամսաթվից հետո 10 օրվա ընթացքում, և Ձեր ծառայության կամ օգնության տրամադրումը կշարունակվի, մինչև կայացվի վերջնական վարչական որոշում: ԱՆՑՆԵԼ Հարց 2-ին

Ոչ > Դուք պետք է լսումների Ձեր դիմումը ներկայացնեք տարածքային կենտրոնի կողմից տեղեկացվելուց հետո 30 օրվա ընթացքում: ԱՆՑՆԵԼ Հարց 2-ին

Հարց 2. Ցանկանու՞մ եք ունենալ ոչ պարտադիր ոչ պաշտոնական հանդիպում:

ԱՅՈ > Ոչ պաշտոնական հանդիպումը պետք է կայանա տարածքային կենտրոնի կողմից լսումների Ձեր դիմումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, եթե Դուք չեք համաձայնել ավելի երկար ժամանակի:

Դուք տարածքային կենտրոնից պետք է ստանաք գրավոր որոշում 5 օրվա ընթացքում: ԱՆՑՆԵԼ Հարց 3-ին

ՈՉ > ԱՆՑՆԵԼ Հարց 4-ին ոչ պարտադիր միջնորդության վերաբերյալ:

Էջ 26՝ 54-ից

Հարց 3. Դուք բավարված եք տարածքային կենտրոնի որոշմամբ:

ԱՅՈ > Տարածքային կենտրոնին հայտնեք, որ Դուք հետ եք վերցնում Անկողմնակալ լսումների Ձեր դիմումը: Ձեր ոչ պաշտոնական հանդիպման որոշմամբ համաձայնեցված ծառայությունների մատուցումը կսկսվի Ձեր հրաժարումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: ԱՅԼԵՎՍ ՄԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՔ:

ՈԶ > ԱՆՑՆԵԼ Հարց 4-ին ոչ պարտադիր միջնորդության վերաբերյալ:

Հարց 4. Ցանակնու՞մ եք ունենալ ոչ պարտադիր միջնորդությունը:

ԱՅՈ > Տարածքային կենտրոնն ընդունու՞մ է միջնորդությունը: Նրանք միջնորդությունը պետք է ընդունեն 5 օրվա ընթացքում:

Եթե տարածքային կենտրոնն ընդունում է, միջնորդությունը պետք է կայանա տարածքային կենտրոնի կողմից լսումների Ձեր դիմումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, եթե Դուք չեք համաձայնել ավելի երկար ժամանակի: ԱՆՑՆԵԼ Հարց 5-ին

Եթե տարածքային կենտրոնը ՉԻ ընդունում միջնորդությունը 5 օրվա ընթացքում, Ձեր գործն անցնում է Անկողմնակալ լսումների փուլ: ԱՆՑՆԵԼ Հարց 6-ին

ՈԶ > Դուք կարող եք անցնել Անկողմնակալ լսումների: ԱՆՑՆԵԼ Հարց 6-ին

Հարց 5. Դուք համաձայնության եկե՞լ եք միջնորդության ժամանակ:

ԱՅՈ > Տարածքային կենտրոնին հայտնեք, որ Դուք հետ եք վերցնում Անկողմնակալ լսումների Ձեր դիմումը: Ձեր գրավոր վճռում համաձայնեցված ծառայությունների մատուցումը կսկսվի Ձեր հրաժարումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: ԱՅԼԵՎՍ ՄԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՔ:

Էջ 27՝ 54-ից

ՈԶ > Դուք կարող եք անցնել Անկողմնակալ լսումների փուլին: ԱՆՑՆԵԼ
Հարց 6-ին

Հարց 6. Ցանկանու՞մ եք անցնել Անկողմնակալ լսումների փուլ:

ԱՅՈ > Անկողմնակալ լսումները կկայանան տարածքային կենտրոնի կողմից լսումների Ձեր դիմումն ստանալուց հետո 50 օրվա ընթացքում, եթե դատավորը հարգելի պատճառով ավելի երկար ժամանակ չի հատկացրել:

Անկողմնակալ լսումների որոշումը պետք է հրապարակվի լսումների վերջին օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում և ոչ ուշ, քան լսումների համար Ձեր սկզբնական դիմումից հետո 80 օրվա ընթացքում, եթե Դուք չեք հրաժարվել ժամանակացույցից՝ հետաձգում (տարկետում) խնդրելով:

Եթե ծառայությունը ֆինանսավորվում է Medi-Cal Home ծրագրի և Community Based Waiver-ի կողմից, ապա որոշումը վերանայվում է DHCS-ի կողմից լսումների դիմումի ներկայացումից հետո 90 օրվա ընթացքում: Որոշումը պետք է ընդունվի, չեղարկվի կամ գրվի տարբեր ձևով: ԱՆՑՆԵԼ Հարց 7-ին

ՈԶ > Դուք կարող եք հրաժարվել Անկողմնակալ լսումներից՝ կապվելով Վարչական լսումների վարչության հետ:

Հարց 7. Դուք բավարվա՞ծ եք Անկողմնակալ լսումների որոշմամբ:

ԱՅՈ > ծառայությունները և օգնությունները կտրամադրվեն Անկողմնակալ լսումների որոշման համաձայն:

Ոչ > Դուք ունեք 90 օր վերին աստիճանի դատարանին վարչական դատական հրաման ներկայացնելու համար: Օգնության համար կարող եք կապվել Կալիֆորնիայի անկարողություններով անձանց իրավունքների կենտրոնի կամ մասնավոր լիազորված անձի հետ:

Էջ 28՝ 54-ից

ՆՇՈՒՄ. Տարածքային կենտրոնը կարող է սկսել կտրել կամ կրճատել ծառայությունները 10 օրվա ընթացքում, քանի դեռ Ձեր լիազոր ներկայացուցիչը չի ստացել դատարանի հրամանը ծառայությունների տրամադրումը շարունակելու վերաբերյալ մինչ դատարանը որոշում է կայացնում Ձեր բողոքարկման վերաբերյալ:

Էջ 29` 54-ից

Հավելված B` Դատավորի փոփոխման դիմումի նմուշ

VIA FACSIMILE (213) 555-5555

Սեպտեմբեր 23, 2015թ.

Susan Formaker

Presiding Administrative Law Judge

Office of Administrative Hearings

320 W. Fourth Street, Suite 630

Los Angeles, CA 90013

Թեմա` Չհիմնավորված բացարկ

Ջոն Դոուս ընդդեմ Տարածքային կենտրոնի

OAH No. 201511100000

Լսումների ամսաթիվ` Սեպտեմբեր 28, 2015թ.

Հարգելի դատավոր Ֆորմեյքեր,

Ես գրում եմ Ջոն Դոուսի անունից և խնդրում եմ Ձեզ կցել այլ դատավոր 2015թ. սեպտեմբերի 28-ին նրա գործը լսելու համար: Ներկայիս կցված դատավորը Սառա Սմիթն է: Խնդրում եմք, որ այս փոփոխությունը կատարվի Կալիֆորնիայի վարչական օրենքի 1-ին հատորի 1034 բաժնի և Կառավարման մասին օրենքի 11425.40 բաժնի համաձայն: Կից ներկայացվում է այդ բաժնով պահանջվող կարգադրված հայտարարագիրը:

Էջ 30` 54-ից

Շնորհակալություն ուշադրության համար: Անհրաժեշտության դեպքում կարող եք կապվել ինձ հետ (213) 555-5555 հեռախոսահամարով:

Հարգանքով,

Ջեյն Դոու

Կից փաստաթղթեր

Էջ 31` 54-ից

Ջեյն Դոուի հայտարարագիր

Ջոն Դոուի մայրը

Ես՝ Ջեյն Դոուս, հայտարարում եմ, որ.

- 1) Ես հանդիսանում եմ դատարանի կողմից քննվող գործի կողմի ծնող:
- 2) Լսումների համար կցված դատավորը կողմի շահերին դեմ է տրամադրված, այնպես որ հայտարարագրողը կարծում է, որ իր որդին չի կարող ունենալ անկողմնակալ և անշահախնդիր լսումներ դատավոր Սառա Սմիթի առջև:

Այս հայտարարագիրը ներկայացվում է Կալիֆորնիա նահանգի օրենքով սահմանված կեղծ տեղեկատվություն տրամադրելու պատասխանատվությամբ և ստորագրված է 2015թ. սեպտեմբերի 23-ին Լոս Անջելեսում, Կալիֆորնիա:

Հարգանքով,

Ջեյն Դոու

Էջ 32՝ 54-ից

Հավելված C՝ Հայցվորի վկաների և ապացույցների ցուցակի նմուշ

Ձեր անունը

Ձեր հասցեն

Ձեր քաղաքը, նահանգը և փոստային դասիչը

Ձեր հեռախոսահամարը

Լիազոր ներկայացուցիչ [տարածքային կենտրոնի շահառուի անուն] համար

ՎԱՐՉԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ

Հետևյալ գործով.

Հայցվորի անուն,

Հայցվոր

և

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ծառայությունը մատուցող գործակալություն

Գործ թիվ՝

Լսումների ամսաթիվ՝

Լսումների ժամ՝

Լսումների վայր՝

Վարչական գործերով դատավոր՝

ՀԱՅՑՎՈՐԻ ՎԿԱՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ՎԿԱՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

- 1) Անուն ազգանուն վկան վկայություն կտա [նկարագրեք այն, ինչի մասին տալու է վկայությունը] մասին:
- 2) Անուն ազգանուն վկան կանչվել է դատարան` [նկարագրեք այն, ինչի մասին տալու է վկայությունը] մասին վկայություն տալու համար:
- 3) Անուն, ազգանուն օրինակ. Պ-րն ազգանուն վկայություն կտա հայցվորի զարգացման խանգարումների, նպատակների և ծառայության անհրաժեշտության մասին:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

- 1) Բացման խոսք
- 2) Լսումների փաստաթղթեր
 - a. Ծառայության դիմում առ [նշել ամսաթիվը]
 - b. Մերժման նամակ առ [նշել ամսաթիվը]
 - c. Լսումների անցկացման դիմում առ [նշել ամսաթիվը]
 - d. Լսումների ծանուցում
- 3) Տեղեկատվություն ծրագրի մասին
- 4) Ծրագրի անձնակազմի ինքնակենսագրականներ
- 5) [նշել ծրագրի անվանումը] ծրագրի կատարման հաշվետվություն առ [նշել ամսաթիվը]
- 6) [նշել ծրագրի անվանումը] ծրագրի կատարման հաշվետվություն առ [նշել ամսաթիվը]

Էջ 34` 54-ից

7) Հոգեբանական վիճակի գնահատում՝ կատարված [նշել գնահատողի անունը] առ [նշել ամսաթիվը]

8) IPP առ [նշել ամսաթիվը]

9) [նշել անունը]-ի հայտարարագիրն առ [նշել ամսաթիվը]

10) Լանթերմանի օրենքի հատվածներ դատական ծանուցման համար

Էջ 35` 54-ից

Հավելված D` Հայցվորի եզրափակիչ ամփոփագրի նմուշ

Բիլլ X

Հասցե, փողոց

Քաղաք, նահանգ և փոստային դասիչ

Հեռախոսահամար

Բիլլ X, հայրը, հայցվորի անունից, անչափահաս երեխա

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ

ՎԱՐՉԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ գործով.

ԳՈՐԾ # 2015000000

ՍԱԼԼԻ X,

Հայցվորի լսումների ամփոփագիր

Հայցվոր

ընդդեմ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ,

Ծառայությունը մատուցող գործակալություն

ԱՄՍԱԹԻՎ` 9/12/2015

ԺԱՄ` 10:00 AM

ՎԱՅՐ` Regional Center, 5555 Road St., City, CA 90000

I. Խնդրի նկարագրություն

Արդյոք տարածքային կենտրոնը պետք է շարունակի ֆինանսավորել կրթական խորհրդատուի ծառայությունները՝ օժանդակելու Սալլի X-ին ստանալ համապատասխան կրթական ծառայություններ դպրոցական համակարգի միջոցով:

II. Ներածություն

Սալլի X-ը Տարածքային կենտրոնի 14 տարեկան շահառու է և հատուկ կրթություն ստացող ուսանող: Սալլին ունի ուղեղային կաթված և 2015թ. օգոստոսին տարել է սպոնդիլոդեզ վիրահատություն: Նա շատ խնդիրներ է ունեցել իր դպրոցական տեղամասից իրեն անհրաժեշտ ծառայությունները ստանալիս: Այդ դժվարությունների հետևանքով Սալլին և նրա ընտանիքին մեծապես օգնել են տվել կրթական խորհրդատուի ծառայությունները:

2010թ. հունվարին վարչական գործերով դատավոր Դոնալդ Քոուլը լսումների արդյունքում որոշեց, որ Սալլին անհրաժեշտ են կրթական խորհրդատուի ծառայությունները՝ նրա ընտանիքին համապատասխան կրթական ծառայությունների համար պայքարելու հարցում օժանդակելու համար: Տարածքային կենտրոնի (ՏԿ) կողմից ֆինանսավորվող կրթական խորհրդատուի օժանդակության անհրաժեշտությունը Սալլի համար շարունակում է մնալ արդիական՝ Սալլին IEP հանդիպումներում ներկայացնելու, նրա դպրոցի տեղամասից IEP-ի իրականացումը մշտադիտարկելու և նրա ընտանիքին խորհրդատվություն տրամադրելու համար, եթե նա պետք է ստանա իրեն անհրաժեշտ խոսքային խնդիրների շտկման թերապիան և շարունակի ստանալ իրեն անհրաժեշտ ֆիզիկական բուժօգնությունը դպրոցում անվտանգ լինելու համար:

III. Փաստարկ

A. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՍԱԼԼԻԻՆ ՊԵՏՔ Է ՏՐԱՄԱԴՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՐԱ IPP-ՈՒՄ ՆՇՎԱԾ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

Տարածքային կենտրոններից պահանջվում է մշակել Անհատական ծրագրային պլան (Individual Program Plan - IPP) տարածքային կենտրոնի յուրաքանչյուր շահառուի համար: Պլանը պետք է հաշվի առնի առանձին շահառուի և նրա ընտանիքի կարիքները: Սոցիալական ապահովության մասին օրենք (WIC), բաժին 4646: IPP-ի նպատակներն իրականացնելու համար տարածքային կենտրոնը պարտավոր է ապահովել անհրաժեշտ ծառայություններն ու նպաստները: WIC, բաժին 4648(a):

Ծառայություններն ու նպաստները, որոնք կարող են տրամադրել ըստ IPP-ի, ներառում են "պաշտպանի օժանդակություն": WIC, բաժին 4512(b):

Սալլի X-ի համար տարածքային կենտրոնի մշակած ամենավերջին IPP-ն առ 2015թ. օգոստոսի 27 ծանուցում է նրա կարիքների մասին առ այն, որ նրա ընտանիքը ցանկանում է ունենալ նրա դպրոցի տեղամասի հասցեն: Սալլիի IPP-ի համաձայն նա ոչ ամբուլատոր հիվանդ է, թների ֆունկցիոնալ շարժումները սահմանափակ են, ունի ֆիզիկական օգնության կարիք ինքնուրույն խնամքի համար և ունի առողջական խնդիրներ, այդ թվում՝ ադիների խցանում, շնչառական դժվարություններ և նոպաների պատմություն: Սալլիի կարիքները բավարարելու համար Սալլիի IPP-ն ծանուցում է դպրոցի կարևորության մասին: IPP-ն հիմնվում է խոսքային խնդիրների շտկման թերապիայի և իր դպրոցի կողմից տրամադրվող ադապտացված ֆիզիկական կրթության վրա՝ լուծելու հաղորդակցման խնդիրները, զարգացնելու իր մարմինը կառավարելու ունակությունը և օգտագործելու իր ձեռքերը ինքն իրեն կերակրելու համար: Քանի որ դպրոցը կենտրոնական դեր է խաղում Սալլիի անհատական կարիքները բավարարելու հարցում, ինչպես նշվում է ՏԿ-ի կողմից իր IPP-ում, և քանի որ Սալլիի ընտանիքն ունի կրթական խորհրդատուի կարիք դպրոցի համապատասխան

ծառայություններն ստանալու համար, ՏԿ-ն պարտավոր է տրամադրել կրթական խորհրդատու որպես IPP-ի ծառայություն Սալլիի համար:

B. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՍԱԼԼԻԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Տարածքային կենտրոնը "պետք է տարածքային կենտրոնի ծառայությունները ստացող շահառուների համար գտնի և ապահովի ֆինանսավորման բոլոր հնարավոր աղբյուրները", այդ թվում՝ դպրոցական տեղամասերը: WIC, բաժին 4659(a)(1):

ՏԿ-ն պարտավոր է Սալլիին անհրաժեշտ ծառայությունների համար ապահովի ֆինանսավորում ընդհանրական աղբյուրներից: Սալլիի ընտանիքը ներկայումս պայքարում է՝ պահպանելու Սալլիի IEP-ով սահմանված խոսքային խնդիրների շտկման թերապիայի համապատասխան քանակը: Սալլիի սպոնդիլոդեզ վիրահատությունն զգալիորեն փոխեց նրա մարմնի դիրքը անվասայլակում, իսկ վիրահատությունից հետո նրա մոտ զարգացան խոսելու ընթացքում շնչառության կառավարման հետ կապված էական խնդիրներ, քանի որ նա այժմ ավելի ուղիղ է նստում: Չնայած դրան նրա ներկայիս դպրոցական տեղամասը պնդում է, որ նրա խոսքը լավացել է և դիմում է նրա խոսքային խնդիրների շտկման թերապիայի ծառայությունները կրճատելու կամ հանելու համար: Սալլիի կրթական խորհրդատուն օգնում է նրա ընտանիքին պայքարել՝ պահպանելու նրա խոսքային խնդիրների շտկման թերապիան: Եթե Սալլին ի վիճակի չլինի ստանալ այս ծառայությունները դպրոցի միջոցով, նա պետք է փորձի գտնել դրանք տարածքային կենտրոնից որպես վերջին հնարավորություն: Այդ պատճառով ՏԿ-ն պարտավոր է օգնել Սալլիին օգտվել իր դպրոցի կողմից ֆինանսավորվող խոսքային խնդիրների շտկման թերապիայի

ընդհանրական ռեսուրսից՝ իր կրթական խորհրդատուի ծառայությունների շարունակման միջոցով:

Ավելին, Սալլի թույլ առողջության և ինքն իր համար ֆիզիկական խնամք տանելու անկարողության հետևանքով նրա դպրոցական տեղամասի ծրագիրը պահանջում է մշտական մոնիտորինգ՝ համոզված լինելու, որ նա դպրոցում ստանում է իր համար անհրաժեշտ խնամքը: Առանց այդ խնամքի նա ֆիզիկապես ի վիճակի չի լինի հաճախել դպրոց և բաց կթողնի տարածքային կենտրոնի դպրոցական տարիքի շահառուի համար նախատեսված ծառայությունների հիմնական աղբյուրը: Նրա դպրոցի տեղամասը շարունակաբար չի բավարարել իր ֆիզիկական կարիքները՝ վտանգի տակ դնելով նրա առողջությունը: Նրա կրթական խորհրդատուի շարունակական օգնությունն անհրաժեշտ է՝ համոզվելու համար, որ IEP-ում գրված են ճիշտ ծառայությունները և որ նրա IEP-ն հետևողական կերպով կատարվում է:

C. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԿԱՐՈՂ Է ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՕԳՆԵԼՈՒ ՍԱԼԼԻԻՆ ՍՏԱՆԱԼ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Տարածքային կենտրոններն ընդհանուր առմամբ կարող են չգնել "[կ]րթական ծառայություններ երեքից մինչև 17 տարեկանը ներառյալ երեխաների համար", սակայն կարող են վարվել այդպես, եթե "ծառայությունը շահառուի զարգացման խանգարման ֆիզիկական, կոգնիտիվ կամ հոգեբանա-սոցիալական ազդեցությունները մեղմելու առաջնային կամ ծայրահեղ անհրաժեշտ միջոց է հանդիսանում կամ ծառայությունն անհրաժեշտ է շահառուին հնարավորություն տալու՝ մնալ իր տանը, և որևէ այլընտրանքային ծառայություն չկա շահառուի կարիքները բավարարելու համար": WIC, բաժին 4648.5(a)(3) և (c):

SԿ-ն հրաժարվել է ֆինանսավորել Սալլիի կրթական խորհրդատուի ծառայությունները WIC-ի բաժին 4648.5-ի հիման վրա: Սակայն բաժին 4648.5-ը չի արգելում SԿ-ին ֆինանսավորել կրթական խորհրդատուի

ծառայությունները, քանի որ. 1) պահանջված ծառայությունները 3-17 տարեկան երեխայի համար նախատեսված սովորական իմաստով "կրթական ծառայություններ" չեն և 2) անգամ եթե պահանջված ծառայությունը որակվում է որպես "կրթական" ծառայություն 3-17 տարեկան երեխայի համար, Սալլիի համապատասխանում է արտոնության համար:

1. ՍԱԼԼԻԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3-ԻՑ 17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ԵՎ ՀԵՏԵՎԱԲԱՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼ SDRG-Ի ԿՈՂՄԻՑ:

Ծառայությունները, որոնք պահանջում է Սալլիի ընտանիքը, սովորական իմաստով "կրթական ծառայություններ" չեն, այլ ավելի շուտ խորհրդատվական կամ պաշտպանողական ծառայություններ են, որոնք օգնում են Սալլիին օգտվել համապատասխան կրթական ծառայություններից ընդհանրական աղբյուրի միջոցով: WIC-ի բաժին 4648.5-ը, որն ուժի մեջ է մտել Կալիֆոռնիայի հարկաբյուջետային ճգնաժամին արձագանքելու համար, այն ընդհանուր կանոնի սպեցիֆիկ կիրառումն է, ըստ որի տարածքային կենտրոնները չպետք է վճարեն այն ծառայությունների համար, որոնք հասանելի են շահառուներին ընդհանրական աղբյուրների միջոցով: Այն արգելում է տարածքային կենտրոններին վճարել շահառուների կրթության համար այն դեպքում, երբ շահառուները պետք է դրա փոխարեն կրթությունն ստանան իրենց լոկալ դպրոցի տեղամասերից: Սալլիի ընտանիքը չի պահանջում , որ SC-ն վճարի որևէ մեկին դպրոցի տեղամասի աշխատանքն անելու համար, այլ ավելի շուտ պահանջում է կրթական խորհրդատուի ծառայություններ՝ օգնելու Սառային հարկադրել իր դպրոցի տեղամասին կրթել իրեն պատշաճ կարգով: Պահանջվող ծառայությունը կձառայի 4648.5 բաժնի նպատակներին՝ ապահովելով, որ Սալլիի կշարունակի ստանալ համապատասխան ծառայություններ ճիշտ ընդհանրական աղբյուրից:

Հետևաբար, WIC-ի բաժին 4648.5-ը չի արգելում Սալլիի համար կրթական խորհրդատուի ծառայությունների գնումը, և ՏԿ-ն պետք է գնի այդ ծառայությունները՝ Սալլիին անհրաժեշտ ծառայությունների ֆինանսավորման ընդհանրական աղբյուրն ապահովելու համար:

2. ԱՆԳԱՍ ԵԹԵ ՍԱԼԼԻԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ, ՍԱԼԼԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ Է ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

Անգամ եթե կրթական խորհրդատուի ծառայությունները 3-17 տարեկան երեխայի համար նախատեսված "կրթական ծառայություններ" են, Սալլին համապատասխանում է գնումը կատարող մարմնի վրա դրված սահմանափակումից ազատվելու համար, քանի որ նրա կողմից պահանջվող ծառայությունն անհրաժեշտ է, որպեսզի նրան թույլ տրվի օգտվել իր կրթությունից, և հետևաբար որոշիչ է նրա անկարողության ազդեցությունները մեղմելու համար: Ավելին, Սալլիի կարիքները բավարարող որևէ այլ այլընտրանքային ծառայություն չկա:

Տարածքային կենտրոնի շահառուի համար, ով համապատասխանում է հատուկ կրթության համար, դպրոցը նրա անկարողության ազդեցությունները մեղմելու ծառայությունների հիմնական աղբյուրն է: Սալլիի ամենավերջին IPP-ն հայտնում է, որ նա ունի տարբեր առողջական խնդիրներ: Դա նաև մեծ չափով իր դպրոցական ծրագրի առաջադրանքն է՝ բավարարել նրա կարիքները: Օրինակ այն քննարկում է նրա խոսքի խանգարման խնդիրները, սակայն չի ներառում խոսքի շտկման "արդյունք", քանի որ նա դպրոցում ստանում է խոսքի հետ կապված խնդիրների շտկման թերապիա, և այն ներառում է "արդյունք", որը նրանից պահանջում է մասնակցել դպրոցի վարժություններին՝ իր կարողություններն ուժեղացնելու համար, որպեսզի կարողանա սովորել կերակրել ինքն իրեն պատառաքաղով:

Սալլիի նախկին պայքարները իր դպրոցական տեղամասի հետ ցույց են տվել, որ որևէ մեկը պետք է բուռն ու զգոն մասնակցություն ունենա նրա IEP կազմման գործընթացում՝ հավաստիացնելու համար, որ նա անգամ ի վիճակի է լինել դպրոցում և լինել ապահով: Նրա դպրոցն սկզբում հրաժարվել է վերափոխել դպրոցի սանհանգույցը, որպեսզի այն մատչելի լինի Սալլիի համար, և խնդիրը լուծվել է միայն իր կրթական խորհրդատուի միջամտությամբ: Սալլին վեցերորդ դասարանում աղիների անանցանելիություն է ունեցել, ինչն իր մոր կարծիքով պատահել է, որովհետև դպրոցում նրան բավարար չափով չեն հանել իր անվասայլակից (բերելով այն պատճառաբանությունը, որ իրենք չունեն բավարար աշխատակիցներ այդ անելու համար): Այս խնդիրը պետք է լուծվեր նաև կրթական խորհրդատուի կողմից:

Սալլին կարիք ունի առնվազն ի վիճակի լինել ապահով կերպով դպրոց հաճախելու, որպեսզի դպրոցական ծառայությունները կարողանան մեղմել նրա անկարողությունը, և նրա կրթական խորհրդատուի ծառայությունները շարունակեն որոշիչ լինել՝ հավաստիացնելու, որ դպրոցի տեղամասը, որը նրա ֆիզիկական կարիքները բավարարելու հարցում անհուսալի է գտնվել, ապահովի նրա անվտանգությունն ու առողջությունը դպրոցում: Նա ունի նաև դպրոցի տեղամասի միջոցով մատուցվող ծառայությունների մշտական կարիք, ինչպիսիք են խոսքի հետ կապված խնդիրների շտկման թերապիան և ադապտացված ֆիզիկական կրթությունը՝ իր ուղեղային կաթվածի ազդեցությունները մեղմելու համար: Սալլին անհրաժեշտ յուրաքանչյուր ծառայության համար X ընտանիքը պետք է պայքարեր տեղամասի հետ և արդյունքի է հասել միայն կրթական խորհրդատուի օգնությամբ: Կրթական խորհրդատուի ծառայությունները հետևաբար խիստ կարևոր են Սալլիի անկարողության ազդեցությունները մեղմացնելու համար:

Ի վերջո, Սալլիի՝ կրթական խորհրդատուի ծառայությունների կարիքը բավարարելու համար ոչ մի այլընտրանքային աղբյուր չկա: Շահառուի համար ծառայությունների ընդհանրական կամ "այլընտրանքային"

աղբյուրը, որը շատ հստակ սահմանված է WIC օրենքի 4648.5 բաժնում, շահառուի դպրոցի տեղամասն է: Սալլիի դպրոցի տեղամասը շարունակաբար չի տրամադրել նրան համապատասխան ծառայություններ: Նրա կրթական խորհրդատուի նպատակն է համոզել կամ հարկադրել տեղամասին՝ Սալլիին տալ այն, ինչ նրան անհրաժեշտ է:

Եթե համայնքում գործում են ուսանողներին հատուկ կրթական հարցերում պաշտպանող այլ գործակալություններ, ապա Սալլիի համար օժանդակման այլ աղբյուրներ չկան: Սալլին և նրա ընտանիքը երկարատև աշխատանքային հարաբերություններում են իր ներկայիս կրթական խորհրդատուի հետ, ում ընտանիքն օգտագործում է, քանի որ նա ՏԿ-ի ծառայություն մատուցողն է, ով նրանց կցվել է ՏԿ-ի կողմից: Եթե Սալլին այժմ ստիպված լինի սկսել աշխատել մեկ ուրիշի հետ, նոր անձը պետք է շատ ժամանակ տրամադրի նրա պատմությանը ծանոթանալու համար: Սա անարդյունավետ կլինի, և հավանական է, որ նոր անձը երբեք չհասկանա նրա կարիքներն այնքան, որքան նրա ներկայիս խորհրդատուն: Նոր պաշտպանը չի հասկանա դպրոցի տեղամասի հետ Սալլիի պայքարի պատմությունը կամ ի վիճակի չի լինի օգուտ քաղել տեղամասի հետ նրա ներկայիս խորհրդատուի աշխատանքային հարաբերությունից:

Սալլիի հաջորդ IEP հանդիպումը ծրագրված է 2015թ. սեպտեմբերի 21-ին, նա ունի պաշտպանի աջակցության կարիք, ով այդ IEP հանդիպմանն արդեն անմիջականորեն ծանոթ կլինի նրա կարիքներին և այդ հանդիպումից հետո բոլոր հետագա գործողություններին: Հատկապես կարևոր է, որ նրա ներկայիս կրթական խորհրդատուն հնարավորություն ունենա ավարտին հասցնել դպրոցի տեղամասի հետ նրա խոսքի հետ կապված խնդիրների շտկման թերապիայի վերաբերյալ վեճի լուծումը, քանի որ նա արդեն սկսել է աշխատել այդ խնդրի վրա:

Վարչական գործերով դատավոր Դոնալդ Քոուլի 2010թ. որոշումից պարզ է, որ Սալլիի իրավիճակը ոչ սովորական երևույթ է և պահանջել է կրթական խորհրդատուի մշտական ներգրավվածությունը՝ հավաստիացնելու, որ նրա կարիքները բավարարված են: Այս պահին Սալլիի կարիքները կարող են բավարարվել միայն նրա կրթական խորհրդատուի երկարաժամկետ ծառայությունների շարունակման միջոցով:

IV. ԵԶՐԱՓՈՒՄ

Սալլի X-ն ունի իր տարածքային կենտրոնի կողմից ֆինանսավորվող կրթական խորհրդատուի ծառայությունների կարիքը, որոնք նրան կօգնեն օգտվել կարևոր ընդհանրական ռեսուրսից՝ նրա դպրոցի տեղամասի կողմից տրամադրվող հատուկ կրթությունից: ՏԿ-ն օրենքով պարտավոր է նրա համար ապահովել այս ընդհանրական աղբյուրը: ՏԿ-ին չի արգելվում անել դա, քանի որ Սալլիի կրթական խորհրդատուի ծառայությունները 3-17 տարեկան երեխայի "կրթական ծառայություններ" չեն: Ավելին, անգամ եթե նրան անհրաժեշտ ծառայությունը համարվում է կրթական ծառայություն, Սալլին համապատասխանում է կրթական ծառայությունների գնման սահմանափակումից ազատվելու համար, քանի որ այս ծառայությունը կարևոր է նրա անկարողության ազդեցությունները մեղմելու համար և չի առաջարկվում որևէ այլ այլընտրանքային աղբյուրից: Այդ պատճառով ՏԿ-ն պետք է ֆինանսավորի կրթական խորհրդատուի ծառայությունները Սալլի X-ի համար:

Հարգանքով ներկայացրեց՝

Բիլլ X

Սալլի X-ի հայր

Ամսաթիվ՝

Fig 45` 54-hg

Էջ 46՝ 54-ից

Հավելված E՝ Վարչական լսումների որոշում

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ

ՎԱՐՉԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԱՌՋԵՎ

ՄԱԼԼԻ X-ի համար

OAH No. 2015000000 կրթական խորհրդատուի

արտոնության գործով:

Հայցվոր

և

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ծառայությունը մատուցող գործակալություն:

ՈՐՈՇՈՒՄ

Կալիֆորնիա նահանգի Վարչական լսումների վարչության վարչական գործերով դատավոր Մերի Սմիթը լսեց այս գործը Լոս Անջելեսում, Կալիֆորնիա, 2011թ. սեպտեմբերի 12-ին:

Բիլլ X-ը, հայցվորի հայրը, ներկայացրեց հայցվորին, ով ներկա չէր անկողմնակալ լսումներին:

Ռայան Մ. Էսք.-ը ներկայացրեց ծառայություն մատուցող գործակալությունը, Տարածքային կենտրոն (ՏԿ):

Ստացվել են բանավոր և փաստաթղթային ապացույցներ, իսկ գործը ներկայացվել է 2011թ. սեպտեմբերի 12-ին:

ԽՆԴԻՐ

1. Գոյություն ունի Սոցիալական ապահովության օրենքի բաժին 4648.5-ով սահմանվող արտոնություն, որը ծառայություն մատուցող գործակալությանը թույլ է տալիս ֆինանսավորել հայցվորի կրթական խորհրդատուին:

ՓԱՍՏԱՑԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Ընդդատյա հարցեր

1. 2011թ. հուլիսի 5-ին ՏԿ-ն հայցվորին տրամադրել է առաջարկվող գործողության ծանուցում՝ մերժելով կրթական խորհրդատուի ֆինանսավորումը հայցվորի համար: 2011թ. հուլիսի 25-ին ՏԿ-ն ստացել է հայցվորի դիմումը լուսմներ անցկացնելու վերաբերյալ ՏԿ-ի որոշումն առարկելու համար, որին հետևել է այս բողոքարկումը:

Հայցվորի համապատասխանությունը և ներկայումս տրամադրվող ծառայությունները

2. Հայցվորը 14 տարեկան իգական սեռի երեխա է, ում մոտ ախտորոշվել է սուր ուղեղային կաթված և թուլամտություն: 2010թ. հունվարի 7-ի հրամանի համաձայն, որը կազմվել էր նախկին վարչական լուսմների արդյունքում, ՏԿ-ն ներկայումս ֆինանսավորում է կրթական խորհրդատուի ամսական 16-ժամյա ծառայությունները՝ հայցվորին իր Անհատական կրթական պլանի (Individual Education Plan - IEP) կատարման հարցում աջակցելու համար:

Լանթերմանի օրենք և Տարածքային կենտրոններ

3. Լանթերմանի զարգացման խանգարումների ծառայությունների մասին օրենքը (Լանթերմանի օրենք) գտնվում է Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4500-ում:

4. Չարգացման խանգարումներով մարդկանց սոցիալական ապահովության պետական վարչությունը (State Department of Developmental Services - DDS) Կալիֆորնիայի պետական գործակալություն է, որը Լանթերմանի օրենքով պատասխանատու է զարգացման խանգարումներ ունեցող անհատների խնամքին, խնամակալությանը և բուժմանը վերաբերող օրենքների կատարման համար: (Սոց. Ապահովության մասին օրենք, բաժին 4416): Իր իրավական մանդատին համապատասխանելու համար DDS-ը պայմանագրեր ունի շահույթի նպատակ չհետապնդող ոչ պետական հասարակական կազմակերպությունների հետ, որոնք հայտնի են որպես "տարածքային կենտրոններ"՝ զարգացման խանգարումներ ունեցող մարդկանց "նրանց լավագույնս համապատասխանող ծառայություններն ու օգնությունն իրենց կյանքի ողջ ընթացքում" տրամադրելու համար: (Սոց. Ապահովության մասին օրենք, բաժին 4620):

5. Տարածքային կենտրոնի պատասխանատվությունները իր շահառուների նկատմամբ սահմանված են Սոցիալական ապահովության օրենքի 4640-4659 բաժիններում:

Լանթերմանի օրենքում 2009թ. կատարված փոփոխություններ

6. Կալիֆորնիան ապրում է բյուջեի դեֆիցիտի աննախադեպ ծանր շրջան: Պետական իշխանության յուրաքանչյուր բնագավառ, այդ թվում և DDS-ը, տուժել են այս հարկաբյուջետային ճգնաժամից: Ընդունվել է 9-րդ Օրենսդրական ակտը (Assembly Bill 9 - AB 9), որը փոփոխեց Լանթերմանի օրենքը՝ տնտեսական դժվար իրավիճակը բարելավելու նպատակով: Սոցիալական ապահովության օրենքին ավելացվեց բաժին 4648.5-ը, որը նախատեսում է.

"(a) չնայած օրենքի կամ կանոնակարգի ցանկացած այլ հակասող դրույթի, որն ուժի մեջ է 2009թ. հուլիսի 1-ից, հետևյալ

ծառայությունները գնելու տարածքային կենտրոնի լիազորությունը պետք է կասեցվի մինչև կատարվի Անհատական ընտրության բյուջեն և Զարգացման ծառայությունների կենտրոնի ղեկավարը հաստատի, որ Անհատական ընտրության բյուջեն կատարվել է և արդյունքում կլինեն պետական բյուջեի խնայողություններ, որոնք բավարար կլինեն փոխհատուցելու հետևյալ ծառայությունների տրամադրման ծախսերը.

(1) Ճամբարային հանգստի ծառայություններ և դրա հետ կապված ճանապարհաձախս:

(2) Սոցիալական հանգիստ, բացի այն հանգստից, որն առաջարկվել է որպես համայնքային օրվա ծրագրի:

(3) Երեքից մինչև 17 տարեկանը ներառյալ երեխաների կրթական ծառայություններ:

(4) Ոչ բժշկական թերապիաներ, որոնք ներառում են հատուկ վերականգնողական թերապիան, արվեստը, պարը և երաժշտությունը, սակայն չեն սահմանափակվում նշվածով:

(b) Տարածքային կենտրոնի շահառուների համար, ովքեր ստանում են (a) ենթակետում նկարագրված ծառայությունները որպես իրենց անհատական ծրագրային պլանի (IPP) կամ ընտանիքի ծառայության անհատականացված պլանի (IFSP) մաս, (a) ենթակետում նշված արգելքը պետք է ուժի մեջ մտնի 2009թ. օգոստոսի 1-ին:

(c) Արտոնություն կարող է տրամադրվել անհատականորեն արտակարգ դեպքերում՝ (a) ենթակետով սահմանված ծառայության գնումը թույլ տալու համար, եթե տարածքային կենտրոնը որոշում է, որ ծառայությունը շահառուի զարգացման խանգարման ֆիզիկական, կոգնիտիվ կամ հոգեբանա-սոցիալական ազդեցությունները մեղմելու առաջնային կամ ծայրահեղ անհրաժեշտ միջոց է կամ ծառայությունն

անհրաժեշտ է շահառուին հնարավորություն տալու՝ մնալ իր տանը, և որևէ այլընտրանքային ծառայություն չկա շահառուի կարիքները բավարարելու համար":

Օրենքի նոր բաժինը չի սահմանում "արտակարգ դեպքերը" և ոչ էլ նշում է, թե որոնք կարող են լինել շահառուի զարգացման խանգարման "մեղմացման առաջնային կամ ծայրահեղ անհրաժեշտ միջոցները", որպեսզի շահառուին թույլ տրվի շարունակել ստանալ այդ ծառայությունները, և ենթադրաբար այդ որոշումը թողնում է յուրաքանչյուր տարածքային կենտրոնին և ատենակալին յուրաքանչյուր առանձին գործի համար:

Լսումներին ներկայացված ապացույցներ

7. Ուորեն Վ.-ն, ՏԿ-ի ծրագրի ղեկավարը, վկայեց, որ հայցվորի մոտ եղել է "հանգամանքային փոփոխություն" առ այն, որ նա վերջերս սկսել է հաճախել այլ միջնակարգ դպրոց, ինչի արդյունքում նա այլևս կրթական խորհրդատուի կարիք չունի, քանի որ իր խնդիրը կապված էր նրա նախկին դպրոցի հետ: Նա նաև վկայեց այն մասին, որ չնայած հայցվորի ներկայիս կրթական խորհրդատուն՝ Դեբորա Պ.-ն, հանդիսանում է ՏԿ-ի ծառայությունների մատակարար, նա ժամանակին չի հանձնել աշխատանքների կատարման հաշվետվությունները, այնպես որ ՏԿ-ն այլևս չի ցանկանում օգտվել նրա ծառայություններից: Այդուհանդերձ նա չի ստուգվանեց, որ ՏԿ-ն շարունակել է ֆինանսավորել նրա ծառայությունները այն ժամանակահատվածում, երբ նա չի ներկայացրել հաշվետվությունները:

8. Հայցվորի ծնողները ներկայացրեցին համոզիչ վկայություն այն մշտական դժվարությունների մասին, որ նրանք ունեցել են հայցվորի դպրոցի տեղամասի հետ՝ օրենքով պահանջվող և IEP-ով սահմանված ծառայությունները տրամադրելու համար: Նրանք նաև բացատրեցին, որ

Դեբորա Պ.-ն անմիջականորեն ծանոթ է հայցվորի իրավիճակին, կարևոր դեր է խաղացել անհրաժեշտ ծառայություններն ստանալու գործում և հանդիսանում է հայցվորի IEP գործընթացի էական բաղադրիչը: Այնուամենայնիվ, նոր դպրոց հաճախելիս, դեռևս պետք է իրականացվեն IEP-ում նշված բոլոր պահանջվող ծառայությունները: Ավելին, հայցվորը և դպրոցի տեղամասը ներկայումս ունեն տարաձայնություն նրա խոսքային խնդիրների ծառայությունների վերաբերյալ: Այդ կապակցությամբ նոր դպրոց փոխադրումը սահուն չի եղել:

Գնահատում

9. Ծանրակշիռ ապացույցների առկայությամբ սահմանվեց, որ հայցվորը համապատասխան է արտոնության համար ըստ Սոցիալական ապահովության օրենքի բաժին 4648.5-ի (c) ենթակետի: Ներկայացվել են անբավարար ապացույցներ՝ հաստատելու, որ հայցվորը կրթական խորհրդատուի ծառայություններն այլևս չի պահանջել: Անկախ պատճառից հայցվորի դպրոցի տեղամասը հանդես է գալիս որպես չենթարկվող գործընկեր նրա կրթության համար, և միայն Դեբորա Պ.-ի գործողությունների շնորհիվ է, որ տեղամասը համագործակցել է: Ծառայություններն այժմ դադերցնելը ծայրահեղ որոշիչ կլինի հայցվորի և նրա ընտանիքի համար: ՏԿ-ն չի կատարել հանգամանքների բավարար փոփոխություն՝ երաշխավորելու դատարանի այս հրամանի հերքումը, որը սահմանում է արտոնություն կրթական ծառայությունների համար: ՏԿ-ի և Դեբորա Պ.-ի միջև բոլոր խնդիրները, կապված աշխատանքների կատարման հաշվետվությունների ոչ ժամանակին տրամադրման հետ, ավելի պատշաճ կերպով կքննարկվեն որպես ներքին հարց մատակարարի հետ և հավանականորեն կլուծվեն այնպես, որ ՏԿ-ն նրա հաշիվներից կկատարի պահում որպես փոխհատուցում մինչև աշխատանքների կատարման հաշվետվություններն ստանալը, սակայն չի պատժի հայցվորին՝ հեռացնելով նրան իր գործից:

Ապացուցման պարտավորություն

1. Վարչական վարույթներում, ինչպես սովորական քաղաքացիական գործերում, պնդող կողմը որպես կանոն կրում է ապացուցման պարտավորությունը, ներառյալ փոխհամաձայնության պարտավորությունը ավելի ծանրակշիռ ապացույցների առկայության դեպքում: (McCoy v. Board of Retirement (1986) 183 Cal.App.3d 1044, 1051-1052): ՏԿ-ն կրել է պարտավորություն՝ հաստատելու, որ այլևս կրթական ծառայությունների արտոնում չի եղել:

Լանթերմանի օրենք

2. Օրենսդրական մարմինն ընդունել է օրինական համապարփակ սխեմա, այն կոչվում է Չարգացման խանգարումների ծառայությունների Լանթերմանի օրենք, որը կտրամադրի ծառայությունների ու միջոցների բավարար չափով ամբողջական սխեմա՝ զարգացման խանգարումներ ունեցող յուրաքանչյուր անձի կարիքներն անկախ տարիքից կամ անկարողության աստիճանից և կյանքի յուրաքանչյուր փուլում բավարարելու համար: Օրինական սխեմայի նպատակը երկակի է. կանխել կամ նվազեցնել զարգացման խանգարումներով անձանց ինստիտուցիոնալիզացումը և նրանց մեկուսացումը ընտանիքից ու համայնքից և նրանց հնարավորություն տալ մոտենալ միևնույն տարիքի անկարողություն չունեցող մարդկանց ամենօրյա կյանքի օրինակին և վարել ավելի անկախ ու արդյունավետ կյանք համայնքում: (Association for Retarded Citizens v. Department of Developmental Services (1985) 38 Cal.3d 384, 388): Կարևոր է նշել, որ հայցվորի պահանջած ծառայություններից ոչ մեկը չի դիտվել որպես չհիմնավորված կամ իր վիճակի հետ կապ չունեցող: Իրականում շատ ծառայություններ պետք է տրամադրվեին ըստ IEP-ի, իսկ դպրոցի տեղամասն անհայտ մնացած պատճառներով հրաժարվել է կատարել այդ ծառայությունները:

3. Չարգացման խանգարումների Լանթերմանի օրենքի համապատասխան դրույթները ներառված են Փաստացի տվյալներում:

Էջ 53` 54-ից

*Կրթական խորհրդատուի արտոնության համար պահանջի
բավարարման հիմքերի*

առկայություն

4. Ավելի ծանրակշիռ ապացույցների առկայությամբ սահմանվեց, որ ՏԿ-ն պետք է շարունակի ֆինանսավորել կրթական խորհրդատուի ծառայությունները հայցվորի համար: Հայցվորը շարունակեց ներկայացնել բավարար ապացույցներ՝ այս ծառայության համար արտոնություն երաշխավորելու համար:

ՀՐԱՄԱՆ

Արտոնության համար ներկայացված հայցվորի պահանջը Սոցիալական ապահովության օրենքի բաժին 4648.5-ի (c) ենթակետի համաձայն բավարարված է: ՏԿ-ն պետք է շարունակի ֆինանսավորել հայցվորի պահանջը կրթական խորհրդատուի ծառայությունների համար:

ԱՄՍԱԹԻՎ՝ Սեպտեմբեր 23, 2011թ.

ՄԵՐԻ ՍՄԻԹ

Վարչական գործերով դատավոր

Վարչական լսումների վարչություն

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սա վերջնական վարչական որոշում է: Երկու կողմերը ենթարկվում են սույն որոշմանը: Կողմերից յուրաքանչյուրը կարող է բողոքարկել այս որոշումը համապատասխան իրավասության դատարանում իննսուն օրվա ընթացքում:

Էջ 54՝ 54-ից

*Կալիֆորնիայի անկարողություն ունեցող անձանց իրավունքներով
զբաղվող կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր
աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս՝*
[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html):